

11300

891.99.092

C-30 un

11300

ԳՐ. ՏԵՐ.ՊՈՂ.ՊԱՍԵԱՆ
891.99.092
Հ-30 ՏԸ

ՀԱՅ - 6 NOV 2011
ՏԸ

Լեին ՀԱՆԹԻ
„ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐԸ“

ԵՒ

ԱՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՆԿԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Թէ զուր հոգուդ կամքն իս անում,
Մարմինդ բեղամադ է ըլում.
Վուր մէ զարդին կու զիմանամ՝
Դուն ջըրատար Սայեաթ-նովար



Շ Ո Ւ Շ Ի
Տպարան Մ. Բարաջանեանի, Թամիրեան փողոց տուն № 5.
1913

891.99.092

ԳՐ. ՏԵՐ-ՊՈՎ. ԱՍԽԱՑ

Ե-30 մ


ԼԵՒԹՆ ՀԱՅՆԹԻ
„ՀԻՆ ԱՍՏԻԱԾՆԵՐԸ“

ԵՒ

ԱՏԵՓԱՆՆՈՍ ՎԱՆԱԿԵՐ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Թէ վուր հոգուզ կամքն իս անում
Մարմինդ բեղամաղ է ըլում.
Վուր մէ դարդին կու դիմանա՞
Դուն ջըլատար Սայեաթ-նովա:

11300



Շ Ա Խ Շ Ի
Տակարան Մ. Բարաջանեանի, Թամիրեան փողոց տուն № 5.
1913

Յ Ա Թ Ա Զ Ա Բ Ա Ն

1. Մաշթոցի կենսագրութիւնը.—2. 1. Շանթի «Հին Աստվածների» եւ Ստեփաննոսի Յիշտակալանի առվելչութիւնը.—3. Ստեփաննոսի Յիշտակալանի մատենագրական նշանակութիւնը.—4. Ստեփաննոսի Յիշտակալանի ձեռագրերը:

1. Մաշթոցի կենսագրութիւնը.—Ինսերորդ դարի երկրորդ կիսում հայոց հեղինակաւոր և պիտոպոսների մէջ Մաշթոցն ամենից աւելի աչքի է ընկնում իր բազմակողմանի գործունէութեամբ։ Ազգային-եկեղեցական ժողովն ու կաթողիկոսը, թագաւորն ու ազնւականութիւնը, ռամիկն ու քաղաքացին—ամենքը Մաշթոցին ճանաչում, յարգում, նրա կարծիքը հարցնում և նրա աշակցութեան էին դիմում։ Այդ ընդարձակ հեղինակութեամբ պէտք է բացատրել այն հետաքրքրութիւնը, որ նրա կենսագրութեան շուրջը կենդրոնացաւ։ Նրա աշակերտներից Ստեփաննոս անունով մի վանտկան գրեց իր ուսուցչի կենսագրութիւնը հէնց նրա կենդանութեան ժամանակ, երբ Մաշթոց դեռ կաթողիկոս չէր գարձել, այլ մի սոսկ վանահայր էր։ Ստեփաննոսի Պատմութիւնը յետոյ հաստատեց Մաշթոցի միւս աշակերտը, Յովհաննէս կաթողիկոս պատմիչը, իսկ հետեւալ գալերում Ասողիկը, Ստեփաննոս Օրբէլեանը և Կիրտկոսը նորանոր ոճով և տեղեկութիւններով Մաշթոցի կեանքն ու կենսագրութիւնը հարստացրին, ըստ հետեւալի։

Ինսերորդ դարի առաջին կիսում արաբացիները Արագածոտն գաւառն աւերեցին և ժողովուրդը ցրւեց զանազան հեռաւոր գաւառներ։ Եղիվարդ գիւղի ծխատէր քահանան էլ, երբ նրա եկեղեցին աւերւած ու հօտը ցրւած էր արդէն, թողեց իր տոհմական քահանայական գիւղը և գաղթեց Սիւնեաց աշխարհի Սօղք գաւառը,



(143-59)

810 - 97

որ լնկնում էր Սևանայ լճից հարսւ արեւելք։ Գրիգոր քահանան այդտեղ ունեցաւ մի քանի վաւակ, որոնցից պատմութիւնը միայն Մաշթոցի անունն է պահել։ Նա ծնւել է 834—837 թւերին։ Հայրն էր իր սրբոց ուսուցիչը, քանի որ կենդանի էր, իսկ նրա մահից յետոյ Մաշթոցի կրթութեան հոգն ընկաւ Սօդքի հռչակաւոր վանքի վրա, որ յայտնի էր Մաքենեաց անունով։ 827 թւին այդ վանքը նորոգւած էր թէ արտաքին և թէ ներքին կեանքով և բաղմաթիւ վանականներով ստեղծւած էր արդէն մի գրական-կրթական կենցրոն ամբողջ Սիւնիքի համար և միհնոյն ժամանակ վերանորոգւած էր վանքի աւանդական սպին, որ յայտնի էր Սոդոմոն Տօնականից իվելու քննականն այնտեղ գերազանցում էր ձգնաւորականին և կեանքը հասկացւում էր վանքի պատերից գուրս ևս։ Մաշթոցն ահա այդտեղ աւարտեց իր ուսումը և մինչև իր կեանքի վախճանը հաւատարիմ մնաց իր «Ալմա Մատերին», բայց ոչ-աւանց շեղումների։ Յետոյ կուսակրօն քահանայ ձեռնադրւեց Սիւնեաց Դաւիթ եպիսկոպոսից և ընդմիշտ թողեց Մաքենեաց վանքը։ Մօտ 25 տարեկան էր նա այդ ժամանակ և ըրջեց իր հայրենի գաւառները, եղաւ Ապարանում՝ իր տոհմական գաւառում, քարոզեց ու ապրեց մարդկանց մէջ «Մանուկ ուշիմ էր և սիրելի մհծամեծաց և ուամկաց», առում է համառօտարան պատմիչը։ Այդ ժամանակ ահա մի նշանաւոր դէպք պատահեց. վաղաժամ, խիստ երիտասարդ հասսկում «արեակէս» եղաւ Սիւնեաց նահապետ՝ Վասակ Գարուուր։ Նրա այրիացեալ մատաղահաս կինը, որ Աշոտ Իշխանաց Իշխանի գուստըն էր, իր մարդուց ժառանգութիւն ստացաւ Գեղամայ լիճն իր ըրջակայքով։ Կեց տարի այրի էր արդէն Մարիամ Իշխանունին, երբ Մաշթոցը՝ «մհծամեծաց և ուամկաց սիրելին» զրսի աշխարհում քարոզելով և ապրելով էր իր կրթութիւնը լրացնում. բայց մինչև այսօր մեզնից անյայտ մնացած և միայն ակնարկներով սքօղւած պատճառները զրդեցին Մաշթոցին այլ ևս թողնել աշխարհը, մհծամեծներին ու ուամիկներին, մարդկանց բնակութիւնը, նոյնիսկ զիրողն ի պատուի եւ յանարզանս բազմաց, և գնալ Սևանի ջրերով աշխարհքից չէզոքա-

նալ, Մարիամ Իշխանունու ապարանքի՝ Ցամաքարերդի հանդէպ կզզու ծործորների ու փապարների մէջ կուչ գալ, գիտել միայն երկնքի աստղերը, ձանձրանալ Սևանի կապոյտ ալիքների անվերջ խաղերից, ականջ դընել արեւելեան անզուսպ քամուն՝ Սօդքին։ 861—872 թիւը տեսեց այդ ճգնութիւնը, որի մանրամասնութիւնները մենք այսօր նոյնիսկ գժւարութեամբ կարող ենք լսել ու հաւատալ. Չուր անգամ չէր խմում, տառմ են բոլոր կենսագիրները և երեր օրից մէկ միայն ընտունում էր ինչորէ հունդ, սերմ։ Մաքենեաց վանքի քըննասիրական սպին մհուել էր զրեթէ նրա մէջ. այլ ևս ուամիկների ու մհծամեծների մէրը հանգել էր՝ մեզ անյայտ զրգիչը այդքան ուժեղ ցնցումն էր առաջացրել նրա հոգում։ Սակայն ցնցումը ցնցումով ջնջւեց. դէպի աշխարհքն ու ոսմակները, գէպի քննասիրութիւնն ու քաղաքական եկեղեցական ասօրեան Մաշթոցին զրդեց այրիացեալ Մարիամ՝ Իշխանունին, կզզու տիրունին, որ «բազում անգամ» այցելեց Մաշթոցին և համոզից նրան թողնել ճգնութիւնը, կզզում վանք շինել, միաբանութիւն ստեղծել, աշխարհքով հետաքրքրել։ Այդպէս էլ կատարւեց և այնուհետև Մաքենեաց զպրոցի ոգին շատ անգամ երեսն եկաւ Մաշթոցի մէջ. Շիրակվանի ժողովից ստացւած զժորութիւնների ըրջանում նա իր ընդհանրական թղթի մէջ միակ, ընդհանուր եկեղեցու գաղափարն արձարծեց, եկեղեցիների միութեան խնդիրը շարժելով և քաղկէտոնէութեան զիջում անելով։ Դւնի Երկրաշարժի առիթով հովական թուղթ զրեց և միթթարեց աստեածանից «գանեալ» ժողովրդին։ Աբաս-Սմբատեան միջազգային խոսվութեան ժամանակ սաստեց իր հռչակաւոր թղթով արքայեղբօր, յօդուտ արքայորդու։ Իր վանքը կանոններով ու ամրող 25 ամեաց ձիգ աստրիների աւանդութիւններոց ու ծաղկեցրեց։ Իշխանաց Իշխանին իր սրբութեան ուժով այցելութեան զալ ստիպեց իր վանքին և իրեն։ Եւ վերջապէս՝ 897 թւին կաթողիկոս ընտրեց Սմբատ թագաւորի, նրա քրոջ Մարիամ Իշխանունու և արքայական տոհմի ձեռնուութեամբ. բայց հազիւ 7 ամիս անց կնքեց իր մահկանացուն և թաղւեց Գառնի աւանում

Խոսրովագուխտի ապարանքում:

Մաշթոցին յիշող բոլոր պատմիչները նրա ամենաանշանաւոր գործը համարում են Սևանի վաճքի հիմնարկութիւնը, բայց նրանք բոլորը միակերպ անհատական անձնական դրդիչից են համարում վանքի գաղափարը: Անշուշտ՝ Մաշթոցի աշակերտի Ստեփանոսի ուժեղ ազգեցութեան հետեանքն է այդ, որովհետեւ Ստեփանոսը Մարիամ իշխանուհու և Մաշթոցի յարաբերութեան հետ է կապել վաճքի հիմնարկութիւնը և մինչեւ այսօր Մաշթոցի ժամանակակցի և աշակերտի այդ տեղեկութիւնը ըստ արժանւոյն չի գնահատւած և մեղ ինդիրը այլ պատկերով է հանդիսանում:

Աշոտ իշխանաց իշխանը նախ քան թագաւորելը երեսուն տարի շարունակ աշխատում էր հայոց ֆէոզաւական տէրերին կապել իր անձնաւորութեան ու տոհմի հետ որևէ բարեկամութեամբ. այնպէս որ՝ երբ նա թագաւոր գարձաւ, Սիւնեաց և Արծրունեաց իշխանական տները խնամութեամբ միացած էին Բագրատոնեաց հետ. Վրաց, Աղունից, նոյնիսկ լեռնականների հետ նախստ խաղաղասիրական ընթացքով հաշտութեան էր եկել. բազմաթիւ բնիկ հայ ֆէոդալ իշխաններ զիջել էին նրան իրենց կալւածները և ոչինչ չունեցան, երբ մի գեղեցիկ օր նա թագ ստացաւ. Արարացիներից, Սակայն Աշոտի այդպիսի երեսամնայ քաղաքականութիւնը միշտ յաջող բազրով չէր ընթանում. Փոտի թուղթն ու Շիրակվանի ժողովը, ուրացող նախարարներն ու եռանդուն ոստիկաններն այդ ընթացքին խոչընդուռ էին լինում և Աշոտին ստիպում համբերութեամբ յամառել և յարմար օրւայ սպասել: Մի նըշանաւոր խոչընդուռ էր, թերես աւելի վտանգաւոր քան մեր յիշածները, նաև այն խորթութիւնը, որ վրաց քաժանումից սկսած սպրտել էր Մարդպետական, Աղունից և Սիւնեաց եկեղեցական իշխանութեան ու Դւնի կաթողիկոսութիւն իրաւահաւասարութեան յարաբերութիւնների մէջ: Մաքինեաց վաճքը, որ Դւնին կաթողիկոսներ և փակականներ էր տեղ ու Շիրակվանցոց ազգեցութեան դէմ նշանաւոր ոյժ էր ներկայացնում, այդ վաճքը Սողոմոն Տօնականի օրերից սկսած

հետաքրքրւել ու ուսումնասիրել էր եկեղեցու իննը նւիրապետութեան հարցը, Դւնի թէ թեր և թէ դէմ վանականներին հիւրասիրել էր իր հովանաւորութեամբ, իսկ Աշոտ իշխանաց իշխանի դարում Շիրակվանի ժողովի դէմ էր և միանգամայն Աշոտի կամակատար ու անյայտ անցեալով Գէորգ կաթողիկոսին հակալրում էր: Մաշթոցը, Յովհաննէս Դրասիանակերտացին, Յակոբ՝ յետոյ Սիւնեաց եպիսկոպոսը այդ շրջանի և այդպիսի տրամադրութեան անձինք էին: Մի հայեացքով իսկ երեսում է Սիւնեաց և Դւնի կաթողիկոսութեան մէջ եղած խորթութիւնը. Մաշթոց Շիրակվանի ժողովից յետոյ Դւնի դէմ ոի թուղթ գրեց՝ յօգուտ քաղկէպոնէսութեան և ի վկաս իր կաթողիկոսի իշխանութեան, և չը գիտենք ինչ պատճառով՝ Գէորգ կաթողիկոսի ինդիրքին զիջեց և իր զրած թուղթը յետոյ պատռեց: Այդ շրջանում ան հանդէս է գալիս Մաշթոցի և Մարիամ իշխանուհու բարեկամութիւնը, որը պատկւում է՝ Մաշթոցին վերջում Սմբատ թագաւորի, Մարիամ իշխանուհու և այլոց ձեռքով կաթողիկոսացնելով: Ն ամիս յետոյ ձիենոյն կերպով կաթողիկոսանում է Մաշթոցի քրոջ որդին Յովհաննէսը Դւնում, իսկ Յովհաննէսի եղբօր որդին, որ Դւնում փակակալ էր, նշանակւում է Սիւնեաց եպիսկոպոս: Աղունքը բաժանել էր Դւնից Մաշթոցի կաթողիկոսանալով, իսկ Սիւները Յակոբ հպիսկոպոսի չանքերով և Սիւնեաց իշխանների օգնութեամբ՝ աղմուկներով, բանագրանքով և բերդարգելութեամբ սկզբանում խորթացաւ և յետոյ բաժանեց Դւնից ու սկսեց միւռոնը ընդունել Աղունքի կաթողիկոսից. Յակոբին համախոններ գտնեցին թէ այլ և այլ եպիսկոպոսներ (Խոսրով Անձեացի, Վահաննիկ) և թէ իշխաններ:

Ահա այդ պատմական տւեանները հիմք են տալիս հաւանականութիւնից բոլորովին զուրկ չը համարել Սևանի վաճքի հիմնարկութեան և Մաշթոց-Մարիամեան յարաբերութեան զրդիչը նկատել Աշոտ իշխանաց իշխանի քաղաքականութիւնը՝ կապել և ոչ թէ բաժանել, խաղաղութեամբ լուհնել և խոստումով, շնորհներով և այցելաթիւններով գրաւել խորթացածներին, մի հանգամանք՝ որը Աշոտի յաջորդներին միշտ չը յաջորդւեց,

և որը Մաշթոցի աշակերտ Ստեփաննոսը իր Յիշատակարանի մէջ առօրեայ իրական գիտւածները արձանագրելու հետ մոռացութեան է տւել, կամ իր ժամանակին անյարմար մի մերկացումն է համարել:

Այսուամենայնիւ այս բոլորից նկատելի է, թէ որքան մէծ նշանակութիւն ունի Մաշթոցի աշակերտի Յիշատակարանը միջնադարեան վանքերի պատմութեան համար: Մի կողմից ճգնաւորական կեանքի յիտին նըմուշներն իրենց աշխարհամոռացութեամբ հանդէս են գալիս նրա մէջ, և միւս կողմից եկեղեցական և քաղաքական կեանքի չարն ու բարին, կրթութեան և կրօնաւորութեան պահանջներն իրենց առօրեայ հոգսիրով կողք կողքի ապրում ու չնչում են այնտեղ կինդանի կերպով: Բացի սոսկ վարք լինելուց, Ստեփաննոսի Յիշատակարանը պատմական հետաքրքրութիւն ևս ունի. Նրանից տեղեկանում ենք, որ Աշոտ Իշխանաց Իշխանը նախ քան իր թագաւորելը յարաբերութիւն է ունեցել Վասիլ կայսեր հետ, որից ընծայ էր ստացել Խաչափայտի Մասն (ըստ Կիրակոսի՝ Աշոտ Խաչը ստացել է Փոտպատիքարգից) և միենոյն ժամանակ Աշոտի արշաւանքների, ինչպէս նաև Դւնի երկրաշարժի, Շիրակվանի ժողովի և Արտա-Սմբատեան պայքարի ժամանակ գտնում ենք նրա մէջ ժամանակակցի վկայութիւններ:

2. Ստեփաննոսի Յիշատակարանի եւ Շանթի «Հին Աստածների» առընչութիւնը: Պատմական նշանակութիւնից բացի, Ստեփաննոսի Յիշատակարանը գեղարվեստական ահսակէտով ևս արժանի է ուշազրութեան՝ շնորհիւ Շանթի դրամայի. այդ ահսակէտն է եղած Վրդիչը հրատարակելու Ստեփաննոսի Յիշատակարանը, որ 1894 թւից ձգւած էր անուշադիր մեր թղթերի մէջ:

I. Դէմքեր.— Սկսնք այնտեղից, որ գրամայի զործող անձերից զիսաւորների, այն է՝ վանահօր, իշխանի, իշխանունու, Սեղայի և արեղայի յարաբերութիւնը պատմութիւնից է առած, բայց մի կարեոր տարրերութեամբ. Մաշթոցի կեանքում կատարւել է մի հակընթաց ճգնաւորութիւնից դէպի աշխարհային կեանքը և այդ մարմնացած է գրամայի մէջ երկու անձնութիւններու և վանահօր նման) Մաշթոցին, մինչդեռ արեղայի և Սեղայի ծանօթութիւնը իշխանի այցելութիւնից է սկսւում:

Սեան՝ վանահօր և արեղայի՝ մէջ տարբեր ձգութեաների հակագրութեամբ: Նմանապէս այրիացեալ Մարիամ տիկնոջ պատմական կեանքի երկու ըրջանը, այրիութիւնից տռուջ և յիտոյ, մարմնացած է զրամայի մէջ յանձին Սեղայի և իշխանունու: Դրամայի անանուն իշխանը Աշոտ Իշխանաց Իշխանն է (ըստ Ստեփաննոսի), որի դուստրը Մարիամ այրիացեալ տիկինն է: Պատմական անձանց ազգակցական կատը փոփախութեան է Ենթարկւած զրամայի մէջ այսպէս. Սեղան իշխանի դուստրն է, ինչպէս և Մարիամը՝ Իշխանաց Իշխանի: Բաց է մնում զրամայի իշխանունու՝ իբրև իշխանի քրոջ՝ կապը, բայց այդ բացը լրանում է նրանով, որ պատմութեան ընթացքում Մարիամ այրիցեալ տիկինը Սըմբատ թագաւորի քոյրն է հանդիսանում և նրանից լիազօրւած կառավարիչը մի շաբք վանքերի և կալւածների վրա: Դրամայի և Ստեփաննոսի Յիշատակարանի մէջ միակերպ է իշխանի այցելութիւնը վանահօր. Աշոտ Իշխանը հիւսիսային արշաւանքից գառնալով, այցելութեան է զալիս Ցամաքարերդ իր այրիացեալ քրոջը, այդպէս է նաև գրամայի մէջ ըստ էութեան. այդտեղ տեսակցութիւն է կատարւում նաև Մաշթոցի վանահօր հետ: Այդ գիւղածից սկսած պատմական Մաշթոցից և Մարիամ տիկինոջից ծագում են զրամայի արեղան և Սեղան. իսկապէս՝ ինչպէս կը տեսնենք՝ ճգնաւոր Մաշթոցը՝ զրամայի մէջ արեղայի է վերածնում ուժեղ հակընթացով, այստեղ էլ այն է տարբերութիւնը, որ Յիշատակարանի մէջ Իշխանաց Իշխանի այցելութիւնը տեղի է ունենում շատ ուշ՝ քան Մաշթոցի կեանքի՝ հակընթացը, երբ Մարիամը վաղուց ծանօթ էր (գրամայի իշխանունու և վանահօր նման) Մաշթոցին, մինչդեռ արեղայի և Սեղայի ծանօթութիւնը իշխանի այցելութիւնից է սկսւում:

Սակայն միայն զործող անձինքը չեն, որոնք հանձին գալիս պատմութիւնից զրամայի մէջ, կամ պատմական Սեանից գեղարվեստական բեմի վրա. այդ մի չնչին և սոյնիսկ պատհական առումն կարող էր նկատել¹⁾, եթէ չը շարունակէր պատմութեան և

¹⁾) Անձանց նմանութիւնը, տեղն ու ժամանակը նկատել է

դրամայի զուգակշիռը մանաւանդ իմաստի շուրջը, դէմքերից յետոյ նաև դէպքերի խորհրդում. մինչդեռ տհանում ենք, որ դրամայի մէջ գործող դէմքերի համար բոլոր նիւթն ու խորհուրդը ընձեռում են Յիշատակարանն ու պատմութիւնը քայլ առ քայլ և տեղ-տեղ... բառ առ բառ:

II Դէպքեր.—Այս հատւածում դրամայի և պատմութեան եօթը դէպքերն ենք համեմատելու. ճգնութեան դրդիչը. ճգնութիւն. հակընթաց. եկեղեցին իսր երեսութական պատկեր սիրոյ. ունայնութեան փոսի ճգնաւորը. արեղայի ծովակուլ լինելը, և Վահագնի տաճարը:

Ա. Ծզնութեան դրդիչը.—Շատ քիչ ծանօթ ենք վանահօր և արեղայի, ինչպէս և Մաշթոցի անցեալի հետ՝ այս հարցին լրիւ պատասխան տալու համար. երկու տեղ էլ հարցը սքոված է, բայց միհնոյն պատկերն ունի իր մէջ: Դիտենք, որ արեղան մեր ժամանակւայ կուսակրօններին օտար մի անցեալ ունի. միշտ վանքում է եղել ու մեծացել, նոյնիսկ իր աշխարհական անունը նու չի յիշում.

Աղջիկ—իսկ ինչ է քու անունդ:

Արեղա—ինձի արեղայ կը կանչին:

Աղջիկ—իսկ առաջ, առաջ, երր դուն աշխարհն էիր դեռ ու աշխարհնը:

Արեղա—իմ աշխարհքս վանքն է եղեր միշտ, քանի խելքս կը հասնի: Էջ 24—25.

Մաշթոցն էլ այդպէս է մեծացել և նրա աշխարհական անունը մեկ յայտնի չէ. Ստեփանոս Օրբելիանը պատմում է, որ Եղիվարդեցի Գրիգոր քահանան «ետ զՄաշթոց յաշակերտութիւն սուրբ հօրն Մաքենոցց Ստեփանոսի. յորում զարգացեալ ներքին հասակաւն՝ ձեռնադրի ի քահանայութիւն ի Տէր Դաւթայ Սիւնեաց եպիսկոպոսէ: Եւ անտի երթեալ Արտաւազի Ապարանք, և անտի գնայ, մտանէ ի Սևան կղզին: (Էջ 173 Տիփիս):

Այս միակ Մաշթոց անունից դրամայի համար

Կահանա Մալխասեան իր մի յօդւածում «Մշակի» մէջ 1913 թ. № 29:

կարելի է եղել երկու աստիճանաւորներ յիշել իրենց աստիճանների անունով, ոյն է՝ վանահայր և արեղա, հիմնելով Մաշթոցի կեանքի հակընթացի վրա. սկզբում արեղան նոյնքան չերմեռանդ էր՝ որքան և վանահայրը, իսկ վանահայրը սկզբում նոյնքան գրաւած էր աշխարհով՝ որքան և վերջում արեղան, ճիշտ Մաշթոցի նման:

Ափսոս, արեղա, քու միտքդ երբեմն թեր ունէր:

Ափսոս, վանահայր, քու միրտք երբեմն թեր ունէր (Էջ 118):

Այսպիսի ցան ու ցրիւ տեղեկութիւն ունինք դրամայի արեղայի անցեալ կեանքի մասին. վանահօր մասին մի քիչ հարուստ են տեղեկութիւնները, որովհետեւ նա Մաշթոցի նման անցեալ է ունցել. արեղան բուսել է այդ անցեալից յետոյ միայն, ուշ ժամանակ, Մաշթոցի հակընթացի բոպէին: Վանահայրն ու Մաշթոցը աշխարհային սիրով տարւած են եղել սկզբում, սրբի թեր են ունցել, բայց աւելի քան մի քանի խօսքերի մասին իշխանուհու ակնարկից՝ ոչինչ չը գիտեինք այդ սիրոյ ընութեան մասին:

Յայտնի է որ վանահայրը սկզբում աշխարհքի կեանքը փորձել է՝ զիթ ծանօթութեամբ իշխանուհու. բայց յայտնի չէ թէ ինչու չամուսնացաւ, եթէ սիրում էր նրան, թէպէտ կարող ենք այդ մասին որոշ ենթադրութիւն անել, որովհետեւ իշխանուհին հարկաւ ակամայից մի չը սիրած երիտասարդի հետ ամուսնացաւ. և երեխի՝ վանահօր հետ ունցեած անյաջող ծանօթութիւնից յետոյ գատապարտեց մայր լինելու, ամուսին գաւնալու, առանց ընտանեկան և ծնողական սուրբ զգացումներ տածելու իր հոգում: Վանահայրը նոյն իսկ իր սիրոյ մասին արած հարցերին պատասխանելուց խուսափում է և միայն ձերմակաւորին միանգամ պատասխանում է տյդ մասին զրական մտքով, իսկ իշխանուհու յանդիմանում է, որ նա խորտակել է վանահօր կեանքի առաջին շրջանը:

Մեր ստորագծոծ թէութիւնները պատմութիւնից են անցել զրամային. Մաշթոցը գնաց ճգնելու թողեալ զատի ընակութենէ մարդկան զիրողն ի պատոի եւ յա-

Նարզանս բազմացն: Եւ գնաց ճգնելու հէնց նրան կալւածքում, որի հետ յետոյ միացաւ և աշխարհըն ու ճպութիւնը հաշտեցրեց՝ կղզու վրա եկեղեցի կառուցաւ նելով՝ ճիշտ գրամայի համաձայն: Վարքն աւելի սկզմէ այդ ի պատուի սիրողի նկատմամբ, նրա ով լինելը չի առւած այսահեղ: Յայտնի էլ չէ թէ ինչպէս և ինչու հէնց Յամաքարերդի գիմաց և իշխանունու աչքի առաջ անպատճառ պէտք էր Մաշթոցին ճգնել և պարզ չէ այդ ակնարկները որպիսի սիրային արկածի անյաջող որոնման են վերաբերում: Բայց անկատկած է, որ նըրանք իրենց խորհրդաւորութեամբ մի վէպի համար, մանուանդ երեսակայութեան օժանդակութեամբ, յարմար նիւթեն հանդիսանում: Այն էլ պիտի տեսնել, որ ճգնութեան գրգիչը ծածկեալ խորհուրդ է միայն վանահօր նկատմամբ, ինչպէս պատմութեան մէջ Մաշթոցի նկատմամբ տեսանք. ինչ վերաբերումէ արեղային՝ այդ խորհուրդը ոչ սիայն չի ծածկեած, այլ խիստ բացարձակ յայտարարւած է իշխանի կողմից յայտնի նպատակով, այն է՝ որպէսովի վէպի հանգոյցի մէջ արեղան մի հակոտնեայ հանդիսանայ վանահօր դէմ: վանահոյը իշխանունու հետ չի կարողացել ամուսնանալ, երգօ ճգնութեան է դիմէլ կեանքից խորտակւելով, ինչպէս և Մաշթոցը, իսկ արեղան կարող է իշխանի աղջկայ: Ետ ամուսնանալ, երգօ պէտք է թուղնէ ճգնութիւնը, կեանքից վերցրածը վերցնելով, կամ յաղթահարւելով կեանքից, ինչպէս Մաշթոցը՝ Մարիամից: Այդպիտի հակոտնեան գրամայի մէջ ստեղծւած է ի հետևումն այն ըմբռնման, որ նեղինակն ունեցել է Մաշթոցի և վանահօր անյաջող սիրոյ՝ իր ճգնութեան զրպիչի մասին, պատմութեան մութ ակնարկը իր երեսակայութեամբ լրացնելով, բայց կրկին մութ թուղնելով սիրողների ծագման կամ դասակարգային խտրութեան գերը անյաջող սիրոյ՝ իր ճգնութեան զրդապատճառի ինդրում: Ահա իշխանի յայտարարութիւնը.

— Պրադ պիտի չըլլար այդ սկ վերաբերուն և ես գիտէի իմ ընելիքս: Քեզի կուտայի իմ տակիս սև նժոյզը, կուտայի քեզի, այ, իմ սիփական սուրս, և կ'առնէի քեզի իմ պալատս, իրրե իմ հարազատ որդիս: Զիս ու

սուրս թէ հերիք չեկաւ, կուտայի քեզի և աղջկա... էջ 16:

Բ. Ծղնաւորութիւն.—Ճգնաւորական կեանքի մասին տարբեր հայեացքները, իրրե հոգու և մարմնի, սրտի և մարփի թելազրութիւններ, այնքան սովորական են, որ վանահօր ու արեղայի տիպերը անպատճառ Յիշտասկարանից փոխ առնելու և մի ողբերգութեան հիմքը գարձնելու կարիք էր չպացւել. այդ տիպերի ավրումները կարող են նկատել իրրե մի սովորական դարձած արկած՝ մեր կեանքում մանաւանդ, և ուրիշ ոչինչ: Բայց քանի որ գրաման իր ամրագծ հիւսւածքով պատմութեան փոխազրութիւնն է բիմի վրա, ուստի վանահօր և արեղայի ճգնութիւնը՝ նոյնպէս: Կրկին՝ Մաշթոցի կենսագրութիւնից ճգնութեան մասին տարբեր հայեացքները հանդէս են գալիս գրամայի մէջ և մաքասում են նրանք վանահօր և նրան աշակերտի՝ արեղայի մէջ, ինչպէս Մաշթոցի և նրա Գէորգ աշակերտի մէջ է. այդ գեռ քիչ է. Մաշթոցն իր տոհմով մի կուտակցութեան ներկայացուցիչն են, և հակառակ դեռով. գրամայի արեղան Մաշթոցն է, իսկ վանահայրը՝ Գէորգը. մի տեղ Գէորգ աշակերտն է հոգեպաշտը, միւս տեղ՝ վանահայր ուսուցիչը: Ուստի և Մաշթոցը, իւր գարն ու շրջապատը բացի գրամային ափերով, գէմքերով և գէպքերով օժանդակելուց, նաև յարմար ատաղձ են ներկայացնում զրամայի արեղապահանայրական կեանքի կառուցման համար:

Մաշթոցը, համաձայն Ստեփաննոսի Յիշտասկարանի, ունէր «վայելուչ հասակ մարմնոյն», նման գրամայի վանահօր—որ «բարձրահասակ, թաւ և ալեխառ» է (էջ 5): Իսկ Մաշթոցի աշակերտ Գէորգը, Օրբէլեանի պատմութեան մէջ (գլ. ԽԶ, Թիֆլիզ էջ 241—244), «յոյժ գեղեցիկ տեսլեամբ և առոյդ հաստկաւ» մի մանուկ էր. սակայն ոչ մի հանգամանք նրա ներքին որոնման արգելք չըկարողացաւ լինել. նա անձնատուր էր եղել այն մաքին թէ. «Եթէ ոչ թողցէ այր զնայր իւր, և զմայր իւր կամ զիկին կամ զորդի և առնու զիսաչն և զայ զկնի իմ՝ չէ ինձ արժանի», ասում է Օր-

բէլեան, «Եւ երբէք ոչ հանդէք և ոչ հեշտանայր իմարժնական փառս և իցանկութիւնս»: Ահա աստուածացոյց այդ Խաչը կամ գրամայի «տառապանքը» հանդիսանում է պատմակոն: Գէորգի և գրամայի վանահօր որոնումների համար մի շաւիդ:

Վանահայրը — կեանքը խաչ մըն է:

Իշխանը — կեանքը ինքը խաղ մըն է սիայն (Էջ 15):

Գէորգ «օր մի յեղակարծում ժամու անյայտ լինէր յիւր ապարանիցն և յընտանեացն և գնայ ի ծածուկ վանս ուրեք, և փոխէ զհանդերձս իւր ի մաշկեղինս և յայծեայս»: Նրա Համամուհի մայրը, կինը, եղբայրներն ու ծառաները հաղիւ նրան գտան, «բոնութեամբ ածին յապարանս իւր», փոխեցին «զգծուծ հանդերձն այծեայ և զիոնոր ցփիսն, զգեցուցին զհայրնի հանդերձն յարքունական մետաքսէից և բոնութեամբ պահէին»: Բայց իզուր. վայելքը և աշխարհը Գէորգի որոնման համար թիւր շաւիդ էին. «Թէպէտրոնութեամբ պահէին, այլ նա ոչ խառնէր ընդ նոսա»: Ամբողջ ժամանակ կարծես «արրեալ և թմբրեալ էր ի սիրոյն Քրիստոսի, և յաւուր միում գարձեալ աներենցիթ լինէր, և զգեցեալ մազեղէն խոշոր և զլոլէնս պատռուունս» զնայր ի մեծ առաքինաբանն երիցու վանից առ աստուածազգեաց և սրբափայլ ճգնաւորն՝ մեծ էգոնումուն Թէոդորոս քահանայ»: Սիւնեաց յեղակից իշխանները, մայրը, կինը — ոչ ոք նրան համոզիլ չը կարողացաւ, «ոչ ինչ կարացին զնա շարժել յայնմ կումաց»: Դրամայի Շերմակաւորը, յիշելով խցիկները, մատուռը և նոր եկեղեցին, ասում է վանահօրը —

— Նայէ ու հպարտացիր: Զէ որ այդ բոլորը քու կամքիդ ծնունդն է, (Էջ 6), մի կամք, որ թշնամի է գեղեցկութեան, որ աշխատում է զգայարանքները չորցնել և կրքերը մարել, թշնամի է կեանքի ու շարժումի, ուժի ու ծնունդի (Էջ 6): Վանահայր — Կամքը, ծերունի. ուզէ ու կըշինեա, եթէ մահանեխի չափ հաւատք ունենաս քու կումքիդ (Էջ 113):

Գէորգի այդ տարօրինակ, էքսցենտրիկ քայլը քննւեց թէ աշխարհում է թէ վանքերում, պաշտպանող և պարսաւող, գաղափարակից և թշնամի բանակներ

կազմւեցին. ամենից զօրաւոր պաշտպանը «սրբափայլ ճգնաւոր մեծ էգոնումուն Թէոդորոս քահանան էր», բայց թւի թէ այդպիսի հեղինակութեան անգամ չէին հաւատում, «ոմանք խանդային ընդ Գէորգայ և մախանօր զկծեցուցանէին զնա խիստ բանիւր ի վարդապետաց և յաշխարհականաց» և հարկաւորւում է ժամանակի հանաւոր վանականների կաթողիքն առնել և նրանցով պաշտպանւել. Թէոդորոս վերցնում է Գէորգին և գնում է Մաքենիաց Սողոմոնի և Սկանի Մաշթոցի մօտ. երկար նրանք կանգ են տոնում Մաշթոցի մօտ. «վարժեցին ու խրատեցին նրանից ամեն բարեձեռութեամբ, բազում տւուրքը կեցեալ ընդ նմա»: Երբ Սիւնեաց եպիսկոպոսը վախճանւեց, որովհետեւ քահանայական աստիճան նա չէր տեւել Գէորգին, վերջինս շտապեց նրայաջորդի՝ Տէր Յովհաննէսի մօտ. բայց ապարգիւն. բաց «ի յորդորմանէ միխթարական խրատուց» ոչինչ չըշահեց և կրկին էգոնումուի հետ գարձաւ երիցու վանքը: Թւի թէ ժամանակի Գէորգ կաթողիկոսն էլ հակառակորդների թւումն էր, որովհետեւ Տէր-Յովհաննէսը միակ ճանապարհը, որով Գէորգ կարող էր աստիճան ընդունել, համարում էր կրկին գնալ Մաշթոցի մօտ, նրանից յանձնարարական վերցնել և ներկայանալ հայրապետին: Գէորգն այդպէս էլ անում է, բայց աստիճան ստանալու համար հարկաւորում է զեռ կանխապէս Մաշթոցից հայրապէտը լինել. Մաշթոցը թղթի մէջ պատում է Գէորգի «զամենայն որպիսութիւն» և «երաշխաւոր լինի նմա»: Ճի՞տ է Գէորգը զրանից յետոյ ձեռնադրում է, բայց Մաշթոց «վասն երաշխաւորութեանն անգամը յորդորական թղթով և հոգենոր խրատու զգուշացուցանէր զնա»: Գէորգին Մաշթոց իր պաշտպանութեան տակ էր պահում նաև այն ժամանակ, երբ կաթողիկոս գարձաւ: Թէ որքան ուժեղ էին Գէորգի թշնամիները և որքան կարենոր էր այդ պաշտպանութիւնը, երեսում է Գէորգի և Մաշթոցի յարաբերութիւնից, երբ Մաշթոց մեռաւ, Գէորգը չը կարողացաւ կաթողիկոսարանում մեալ. «զշուրջառն, և զկնկրւլն խոյրակերպ և զպարհեգոտ երանելոյն Մաշթոցայ նշան յանուն Սիւնեաց բերէր և բնակէր յերիցու վանս


ընդ Թէոդորոսի: Այստեղ էլ նա մեռաւ, բայց թողնելով մի սերունդ, որը Մաշթոցի սերնդին հակոսնեայ ընթացք ունեցաւ. Գէորգի հարազատ որդին Ստեփաննոսը, որ աւագն էր, կուսակրօն գարձում՝ առանց հօր չափ և նոյնիսկ՝ սակաւ գժւարութիւնների հանդիպելու. Ղաթարի լեռներում նա յատուկ ուրուկներին խնամելու համար մի ճգնաբան. Հիմնեց՝ մարդկային բնակութիւնից հեռու, լեռների մէջ, որ իւր հօր նման նա և «առաքինաջան վարուք և հրեշտակակրօն առաքինութեամբ զանմաբնոցն ի մարմնի բերելով զկեանս, մեռեալ մարմնով և կենդանի հոգով, փոխի յիմանալի կայանս ի կարգս հրեշտակաց» 970 թւին: Գէորգի կրտսեր որդին ամուսնացաւ, բայց նրա որդին Քրիստոֆորը կրկին կուսակրօն գարձաւ, ուրկանոցի առաջնորդութիւնը վարեց. իւր Գէորգ պապի և հօրեղոր՝ միանգամայն և ուսուցչի՝ Ստեփաննոսի նման ապրեց, ճգնեց, «յամենային նմանեալ վարդապետին իւրոյ (Օրբէլ. Գլ. Խէ, Տիփիս էջ 245—6):

Այդ տոնմի հակոսնեան հանդիսացաւ Եղիվարդեցի Գրիգոր քահանայի սերունդը. Մաշթոցը ճգնաբանը շուտով փոխարինեց Մարիամ իշխանունու ծանօթութեամբ և աղօթքը՝ կաթողիկոսական հոգուերով: Նրան յաջորդեց իւր քեռորդին Յովհաննէս կաթողիկոս պատմիչը, իսկ միաժամանակ Սիւնեաց եպիսկոպոս գարձաւ Յովհաննէս պատմիչի եղրօր որդին Յակոբը—այր բարձրահասակ և զեղեցկատեսիլ, հանձարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեղամիտ, անձնեայ և սէպ, բարձրայօն և մեծաբարոյ, բնութեամբ ազատ և բանիւ ձոխ, հանձարով պայծառ և ըրթամբք յոյժ քաղցր. (Օրբէլ. Տիփիս էջ 253, 275): Յակոբը քաղկէտնէութեան յարեց՝ Մաշթոցի նման, բայց անդարձ կերպով. նրա մասին յետոյ:

Այսպէս է ահա պատկերանում և այս չափով զրամացի վանահօր և աբեղայի հակոսնեայ որոնումների ատաղը պատմութեան մէջ, աւելին Շանթի սեպհականութիւնն է, որը Յիշտակալարանը չունի, սակայն նրա համար, որ ոչ սիմվոլիկ և էֆֆեկտաւոր տեսարաններ ստեղծելու, և ոչ էլ միը ժամանակի զեղար-

ւեստական տրամախօսութիւնն ու մենախօսութիւնը պատմագրութեան ձեւ ընդունելու հնարաւորութիւն ունէր պատմիչը: Խնդիրը սրտի և մտքի, հոգու և մարմնի ընդհարման սաղմն ու ընդարձակ քննասիրական միջավայրն ու շրջանն է, որը և պատմութիւնը բովանդակում է հնարաւորութեան չափով և այդքանով իսկ նիւթ է մատակարարում ընթերցողի երեակայութեան:

Գ. Հակլլնթացը. — Անշուշա՝ բնական, բանաստեղծական և պատկերաւոր է, որ գրամայի մէջ բնութեան հզօր պահանջը, սեռի հարկը, խօսի մի զեղեցիկ երիտասարդ, սիրուն մանչ, տղայ աբեղայի (էջ 38 և 42) և դեռափթիթ Սեղայի մէջ, քան թէ՝ որ նոյն պահանջը հանդէս գայ մի արդէն ճգնաւոր Մաշթոցի և այրիացեալ Մարիամի մէջ, ինչպէս Յիշտակարանն ունի: Այդ առաւելութիւնն ստեղծել է գրամայի հեղինակը՝ Մաշթոցի և Մարիամի կեանքի երկու շրջանները վանահօր և աբեղայի ու իշխանունու. և Սեղայի վերածելով. սուկայն զրանով նա մաքառման, որոնման և խորտակման, ուրիմն և ողբերգականի՝ ոյժը և զրամայի զեղարգեստական պահանջը մի քայլ ևս ոտնահարել է, որովհետեւ միակ անձնաւորութեան մէջ կատարւող հակընթացով աւելի մեծ է հոգու խորտակումը՝ քան եթէ նոյն խորտակումը ցրւած մասերով երկու անձանց մէջ: Անցնենք բացատրութեան, պատմիչները յայտնի պատճառով Մաշթոցի և Մարիամի ծանօթութեան, ուրեմն և հակընթացի սկզբը չեն յիշում: Նախ քան այդ, «մեծ սեպուն իշխանն Սիւնի Վասակ Գաբուռ տղայ հասակաւ յերիտասարդութեան տիս վախճանի, «արեակէս լինի»: Այրի Մարիամը թաղում է իր մարդու զին «զարդարեալ թագաւորական զարդուք, անհուն ամրոխիւ, և անչափ աղաղակաւ և ողբերգական պարուք փողոց և բնարահարաց հանդերձ կաթողիկոսին Զաքարիայի (Օրբէլ. Գլ. Խէ, Տիփիս էջ 172): Այս կաաարեց 855 թւին, այնուհետեւ այրին ամրում էր իր մարդու կալւածքում, Գեղամայ ծովակի ափին: 6 տարի յետոյ 861 թւին հանդէս է զախս Մաշթոցը՝ մեծամեծաց եւ ումեկաց սիրելին, որը՝ թողեալ զիփրուն և պատմի և յանարգանս բազմաց, մեկ անյայս եղանակնի յաջողեց-



նում է արքայազարմ՝ և իշխանապատիւ Իշխանունու կալւածքում՝ Սեան կղզում, նրա աչքի առաջ չէղոքանալ ճպութեամբ։ Այդտեղ՝ ահա, ուր ձորերի ու փառարների մէջ ծածկւած՝ վերացման պիտի անձնատուր լինէր, ընդհակառակն՝ այդտեղ Մաշթոց հարկադրւեց Մարիամ կալւածատիրունուց վանք շինել և միաբանութիւն հաստատել։ — «Հարկաւորեալ բազում թախանձանօք ի Մարիամայ Սիւնեաց տիկնոջէ»։ Մաշթոցը շուտով չը զիջաւ, «Բագում անգամ անունկնդիր եղեալ յետոյ հաւանիցաւ՝ ասելով—Միթէ Աստուծոյ իցէ հրամանս այս՝ ես ոչ ընդդիմացայց»։

Մաշտոցի աշակերտի և ժամանակակցի՝ Ստեփաննոսի այսպիսի պատմական ոճը Ստեփ. Օրբէլեանը և Սեանի հնագոյն մի կոնդակը ձիշա սիրահարւածների «երազ օրերի» նման են պատմում և զրամայի որոշ պատկերների նախատիպը հանդէս բերում։

Ըստ Օրբէլեանի՝ Մաշթոցի և Մարիամի ծանօտութիւնը եկեղեցի կառուցանելու գաղափարով միասին թելաղբւեց երկուսին միանգամից և միակերպ, բայց ուրոյն ուրոյն տեղ—տեսիլքով և անուրջով։

«Մաշտոց հրաման առնու ի տեսլեան շինել եկեղեցի յանուն երկուասան առաքելոց և սահմանել միաբանակեցաց, յաղագս որոյ և գային առ նա երկուասանքն ի վերայ ծովու յանուրջս և նշանէին գտեղի եկեղեցւոյն։ Սոյն երկմամբ վերին ազգեցութեամբ շարժեալ մէծ թագունին Մարիամ գայ առ սուրբն Մաշտոց և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա, ձեռն ի գործ ածեալ շինեն զգեղապանոյն եկեղեցին»։

Ապա Աշոտ Իշխանաց Իշխանը, Մարիամի հայրը, այցելում է իր աղջկան և Մաշթոցին, նրանց հոգեոր հաշտութեամբ ուրախանում է, և Խաչափայտի Մասունքի ու Յամաքաբերդի և ուրիշ հինգ գիւղերի նւիրմամբ ապահովում է թէ Մաշթոցի աշխարհային կեանքի հակընթացը և թէ վանքի ապրուստը։ Սակայն ինչ էր անհաշտութեան պատճառը Մաշթոցի և Մարիամի մէջ, որով և վերին ազգման սիմվոլիկ ներշնչումը հարկաւորւեց, այդ է զլխաւոր հարցը։ Կանանց մոււքը արգելած էր կուսակրօնների ընակափայրը. այդ ար-

գերի վերացմամբ՝ Մաշթոցի համար, ինչպէս և Սեղայի մարմնի հպմամբ արեղայի համար՝ սկսեց նրանց հոգում հակընթացի ուժեղ պահանջ։ Սեանի մի կոնդակի մէջ, որ առաջ է ըերում Շահիմթունեան (Բ. էջ 211. 2), այդ արգելքի հնդիրը, ինչպէս և նրա վերացման սիրապատար գիւղւածը ևս առաւել բացարձակօրէն շեշտւել են այսպէս։

«Մարիամ թուգուհի արգելեալ լինի մտանել ի կղզին ի Մաշտոցայ որբոյ հօրէ՝ թէ ոչ երբէք մտեալ է այսր կին մինչև ցայժմ, և արդ ես չէ կարելի. բայց ի թախանձանաց ջերմեռանդ տիկնոջն ստիպեալ՝ յդէ պատգամ առ նա, թէ գու այդր ի Յամաքաբերդ տեղւոնչը ազօթնա առ Աստւած և ընկալչիր զհայցուածս քո. և ինքն ես երանելին Մաշտոց յունկացութեան աղօթելով առ Տէր անցուցանէ զայն զիշեր և ինդրէ յԱստուծոյ, զի թէ հաճոյ իցէ ինքեան՝ զալ մտանել տիկնոջն, յայտնեալ ցուցցէ վերնական տեսլեամբ. և այնինչ երկոքեան՝ սուրբն Մաշտոց ի կղզուղ, և Մարիամ թագունին ի Յամաքաբերդ ջերմեռանդ ինդրուածովք յազօթու կային յայն զիշեր, ի մերձիլ ծագման լուսոյ՝ տեսանէին զտեսիլ միօրինակ. զի ահարացեալ հաստատութեան երկնից և ցոլացեալ լոյսիջանէր ի վերայ ծովուն, և ընդ լուսոյն ի չորից կողմանց առաքեալըն երկուասան ընթանալով ի վերայ ջրոյն ելանէին ի ցամաք անգը կղզուոյն և մերձ ի տաճարն սրբոյ Յարութեան ի հարաւոյ կողմանէ ի տեղի ինչ տափարակ թափօր արարեալ՝ օրնէին զտեղին և ցուրբըն Մաշտոց առէին. աստ կառուցէր զիկեղեցին յանուն մեր. և ապա վերանային յերկինս. որոյ վասն ըստ հրամանի սրբոյ հօրն ի կղզին մտանէր Տիկինն ջերմեռանդ և պատմելով իրերաց զցոյց յայտնութեանն և նկատելով իսկ ի տեղւոնչն զհետս ոտից առաքելոցն և զցոյ լուսափայլ ի գալարին անդ՝ հիմնարկեալ տային կատարել զշինուած առաջարին ի թիւ հայոց Յիթ»։

Այս տեսիլքը, որ Օրբէլեանն էլ համառօտ յիշում

է (Տփխիս էջ 173), գրամայի մէջ հանդէս է գալիս աւեղայի հակընթացից առաջ, առաջին արարի առաջին տեսարանում, Շերմակաւորի յորդորով՝ երկրպագելու հին աստևածներին՝

Վանահայր—Ով էր: Զքացաւ: Տեսիլը, կասկած... (Յանկարձ վճռական) Ա՛, երեք: Աշխարհքը մուտք չունի այս կղզին: Աշխարհքը մուտք պիտի չունենայ այս կղզին, ոչ (էջ 6):

Այս՝ Պատմութեան «բազում անգամ անունկնդիր եղեալ» իմաստն է:

Սակայն աշխարհքը հետեւել տեսարանի մէջ մուտք է գործում կղզին յանձին իշխանի աղջկայ Սեղայի՝ Պատմութեան Մարիամի —

Ալամ—Իսկ ով էին ծովը թափւածները: Շատութը:

Քարտաշ—Միայն երկութը, մեր արեղան ու օրիորդը:

Աղամ—Օրիորդը... Բնչ օրիորդ:

Քարտաշ—Իշխանին աղջիկը:

Աղամ—Վայ, մն ալ իշխանի հետն էր:

Եւ ապա նաև—

Դազար—Հիմա ժրքան ժամանակ պէտք է ապաշխարէ արեղան, որ տաճարին մուտքը նորէն բացւի իրեն համար:

Աղամ—Ապաշխարէ, ինչու համար:

Դազար—Զէ՞ որ ծեռք է տւեր կնկա:

Աղամ—Բայց... բայց այս տեսակ գէսք...

Դազար—Ատիկա միենոյն է, մեղքը մեղք է միշտ: (Էջ 10—18):

Այսպէս ահա Մաշթոց իր ճգնութեան և ապա Մարիամի ծանօթութեան ժամանակ որոնումներով էր ապրում. կինը իր անյաջող և անհաշտ դրութեամբ պատճառ է գառնում, որ նա մի անգամ փափարների մէջ ճէնի և միւս անգամ իշխանունու հետ միանայ եկեղեցու գաղափարի շուրջը: Դա խորտակումն է, եթէ հակառակ պրիզմայից նայւի. բայց խորտակումն է նոյն կերպ նաև Մաշթոցի աշակերտի՝ Գէորգի աշխարհուրացութիւնը, և այդ պատճառով ըստ դրամայի—ամե-

նայն ինչ ընդունայն է և երազ: Նոյն կերպ ահա գրամայի վանահայրը—Յովհաննէս և արեղուն իրենց կեանքը խորտակում են, հակընթացի են հնթարկում կնոջ արգելիքի ճանապարհով:

Հակընթացի պատմութիւնից՝ կոնդակի այն տողերը, ուր յիշւած է Մաշթոցի պատգամը, որ տիկինը ջրի մի ափին աղօթէ գիշերը, իսկ ինքը միւս ափում պիտի աղօթէ—եկեղեցու տեղը, ծրագիրը և մակարդակը երկնային ներշնչմամբ ընդունելու և երկու սեռերի անձանց մէջ գաղափարական զործ առաջ բերելու համար, այդ բոլորը զբամային անցել է իշխանունու այս խօսքերի մէջ սիենոյն նպատակով և առարկայով.

Իշխանունի—Կեանքիս ամենէն քաղցր վայրկեաններն են եղած, երբ մենք միասին այս նոյն սեղանին երկու կողմը նստած մեր երեակայութեան մէջ ստեղծեր, կառուցեր ենք այդ շնչը (Էջ 59), պատասխան տուր, ուրախ չէիր, միթէ հոգիու ուրախ չէր, երբ հոս այս մենութեան մէջ գէմ-դէմի նստած կը խօսէինք ժամերով ու կը ծրագրէինք (Էջ 63): Տես, այս լուսամուտը, որ քու կղզիիդ կը նայի ու քու լուսամուտիդ, այն քու փոքրիկ լուսամուտիդ, ուր մինչև կէս գիշեր անմար է ճրագը: Թուն երեի կը կարդաս ու կ'աղօթես, ևս ալ հոսկէ կ'աշխատեմ քու մաքերդ կարդամ ու քու աղօթքներդ (Էջ 62):

Ինչպէս երեաց, Մաշթոցի պատմութեան և Շանթի դրամայի մէջ սեռերի տարբերութեան պարագան է նկատւած մտքի և սրաի անջրպետող պատնէշը. և միակերպ՝ Պատմութիւնն ու զբաման տեսիլքներով են ասում այն, ինչ որ նրանց հեղինակները չեն կարողացել ասել իրերի իսկական անունները տալով. այդ պատճառով գրամայի սիմվոլ արտայայտութիւնները՝ իրը նորագոյն զբական շկոլայի ազգմամբ՝ մի մի շքեղ, աչքալպարար ու նրբաքիմ տեսարան—ուղիդ շարունակութիւն պիտի համարեն. Մաշթոցի միջնադարեան տեսիլքին և բազում անզամ անունների եղեալ անորջներին: Սակայն աւելի քան զգաստ, մտացի և լուրջ շունչ ու հոգի ունի հայ հանձարը, երբ նկարագրում է վանքի և կնոջ, կամ սեռերի փոխազարձ յա-

բարերութիւնը. այլիս նրա ստեղծագործութեան հիմքը սեռերի տարբերութիւնից ու մարմինների հպումից առաջացած ցնցումը չէ, իսկ ոճը շքեղ կամ աչքապարար ոչինչ չի բովանդակում: Եւ համեմատելու համար առաջարկում ենք այդ դրւագը:

Յովհան Մամիկոնեանը պատմում է, որ երբ Գևակայ վանքի մուտքն արգելեց Թոթիկ վանահայրը Մամիկոնեան Մուշեղի աղջկան՝ Արծունի Վարդ Պատրիկի կնոջ Մարիամին, վիրջնս երկար բանակցութիւնից յետոյ՝ տեղեկանալով, որ արգելը Յովհաննէս Մկրտչի կնոջ խնդիրքով զլխաւելու պատճառով սահմանել է Գրիգոր Լուսաւորիչ, ըողոքեց և բռնութեամբ մտաւ վանքը: Նրա ըողոքի մէջ թագնւած է մեր ժամանակին զբաղեցնող ոօցիալական մի կնճռոտ խնդրի սաղմը, այն է՝ կնոջ իրաւահաւասարութիւնը:

«Եթէ վասն իշխանութեան է, ասում է նա վանքի ծառայողներին, ես ոչ երկնչիմ ի ձէնջ. իսկ եթէ վասն թշնամութեան կարապետին ընդ մեզ, և ոչ ինքն ի կնոջէ ծնաւ, և Տէրն ինքն ի կնոջէ է ծնեալ. և ոչ առաքեալք և մարգարէքն մայր ունէին: Արդ ես մտանեմ, ով Տէր, և զՄայրն քո բարեխօս ունիմ ինձ. մի առներ յիս զցասումն բարկութեան քո, զի մի եղէց նշաւակ աշխարհի. զի եթէ դու զկնոջ կաթն արբեր, գոնեա և զիս տաճարի արա արժանի»:

Երբ Մարիամի գրիկի մանուկին միայն վանքի ծառաները տանում են տաճարը՝ սեղանը համբուրելու և յետ են բերում, մայրը դիմում է իր որդուն հետեւալ ողբով—

«Վայ ինձ մեղաւորիս, որ զրկեալ եմ ի բարեաց. ողբացէք զիս ամենայն կանայք, տեղի տուք արտասուաց իմոց ամենայն ձայնարկուք: Ծածկեսցին զիս լերինք, և ողորմեցին ինձ բլուրք. զաղանք եղկեսցին զիս, և թռչնոց աղգք խիթասցին ընդ իս: Հրեշտակք ապաշաւեցին զանձն իմ, և դեք բունեալ յարձակեցան ի վերայ իմ: Ողորմեցարհուք ինձ, ով սուրբ սպասաւորք կարապետիդ, և տուք տանել զիս ի տաճար անգր: Ով որդեակ, ընդէ՞ր բաժանեցար ի գրկաց իմոց. զիարդ ոչ ողորմեցար մօրս քո, ոչ ես ծնայ զքեզ, և ոչ ես

անուցի զքեզ. և զիարդ թողեր զիս միայն (1832 Վենետիկ, էջ 10):

Դ. Եկեղեցին իրբեւ երեսութական պատկեր սիրոյ.—Դրամայի և Պատմութեան մէջ հակընթացի մարմացեալ պատկերը, նիւթական առարկան, եկեղեցին է. ինչպէս գրամայի, նոյնպէս և պատմութեան մէջ շինող զոյգերը շուտով չեն համաձայնութեան գալիս թէ եկեղեցին ում շինածն է, վանահօր՝ թէ իշխանունու և Մուշթոցի՝ թէ Մարիամ տիկնոջ. յայտնի է որ վանահայրն ու իշխանունին տարբեր տեսակէտ ունեն այդ մասին, վանահայրը կառուցման ծախքի, իսկ իշխանունին իւր առ վանահայրը տածած սիրոյ: Սակայն պատմութեան մէջ նոյն կերպ մի քանի պատմէչներ տարբեր տարբեր են յիշում. որը վերագրում է Մաշթոցին, որը Մարիամ տիկնոջ, որը թէ մէկին և թէ միւսին և որը չի յիշում ամեննեին կզում այդ երկդիմի շինարարութիւնը:

Իշխանունին—Այնպէս մօտ է սրտիս, այնպէս կապւած է հոգիիս, կարծես ամեն մէկ քարը ես եմ զըրբեր, ես եմ շիներ:

Վանահայրը (կատակով:) Այս, իշխանունի, ես կը կարծէի, թէ շինողը ես եմ, արդիւնքը եղաւ՝ որ դուն շինեցիր: Այս, գուն շինեցիր, իշխանունի:

Իշխանունին—Ոչ, հայր սուրբ, ես շինեցի այդ եկեղեցին. մենք շինեցինք այդ եկեղեցին, մենք, ես ու գուն: Միասին ենք խորհեր, միասին ենք ոգկորւեր, միասին ենք կազմեր ու միասին ալ կերպարանաւորել: Եւ այնպէս հիւտած է եղեր այդ բոլորը իրարու, որ այժմ բնաւ չգիտեմ որն է որ ինձմէ է ծներ և որը քեզմէ: Կը յիշեմ, հայր սուրբ, մեր այն միասին խորհումներուն ժամերը (էջ 58):

Վանահայրը—Կը յիշեմ, իշխանունի. բաղդաւոր բան է կառուցելը, մանաւանդ տաճար մը, ուր քու Աստւածդ է բնակելու (էջ 59):

Ասորիկը Անանի եկեղեցիների շինող համարում է Մաշթոցին. (Մաշթոց) «շինէ զեկեղեցին ի նմա (ի Սկան) որ առաքեալս անուանի (Գ, Գլ. Գ. էջ 160): Տէր Մարդիս սպասաւոր եղեալ ի վանս Սեանայ, զոր շինեալ էր

երանիւոյ առնն Աստուծոյ Տէր Մաշտոցի (Գ, Գլ. 1Բ.
259 Պետքը):

Բայց Ստեփ. Օքէլեան մի անգամ զբուժ է. «Շի-
նէ Մարիամ զՍևանայ եկեղեցին և յետոյ զՇողուա-
գային (էջ 177. Թիֆլիդ):

Իսկ միւս անգամ—

«Միծ թագուհին Մարիամ գայ առ սուրբն Մաշտոց
և բազում թախանձանօք ի հաւան ածեալ զնա՞ ձեռն ի
գործ արկեալ շինեն զգեղապահոյն եկեղեցին յանուն
սուրբ առաքելոց և կանգնեն զնա տուն Աստուծոյ:
(էջ 173 - 4):

Շահնապահունեան—(Մաշտոց և տիկինն) «Հիմնար-
կեալ տային կատարել զընուած տաճարին ի թիւ հա-
յոց Յիթ ըստ կոնդակին (էջ 212, Բ):

Ստեփաննոսի Յիշտակարանը, երբ յիշում է Մա-
րիամ տիկնոջ թախանձանքն ու հարկադրելը, եկեղե-
ցիների շինութիւնը տալիս է Մաշտոցին:

Ինչ վերաբերում է Յովիաննէս Կաթողիկոսին՝
Մաշտոցի քեռորդուն, նա լուսում է ոչ միայն տիկնոջ և
Մաշտոցի յարաբերութիւնների մասին, այլև լուսիհան
է մատում Սևանի վանքի հիմնարկութիւնը. Մաշտոցին
նա յիշում է իբրև Սևան կղզում բնակւող մի ճգնաւո-
րի և այդ զարմանալի է մանաւանդ նրա համար, որ ու-
րիշ անգամ, առանց անունը տալու, յիշում է նա Մա-
րիամ տիկնոջը, երբ սա իր որդոց հետ միասին Յու-
սուփից փախաւ Սևանում ամրանալու. «Քրիստոսակրօն
և ճգնաւոր, պարկեշտասուն և սրբափայլ կրօնիւք միծն
ի ճգնաւոր» է անուանում նա Մարիամին (էջ 125 - 6,
Մոսկվա): Մաշտոցին ժամանակակից, աշակերտ և աղ-
պակոն պատմիչի այդպիսի վերաբերմունքը եթէ ուղ-
ղակի ցուցումն չէ որևէ կարեոր հանգամանքի գոյու-
թեան՝ որով լսութեան մատնելը խոնեմութիւն է հա-
մարել պատմիչը, կոնէ ապացոյց է, որ նա կարեւոր
գրգիչ է ունեցել այդպիսի լուսթեան համար այն քա-
ռեալ անգամները, երբ Մաշտոցին յիշելու առիթ է ու-
նեցել: Պատմիչների փոխանակող գրիչը ըստ վերոյի-
շեալի զրան ապացոյց կարող է նկատել և այդպիսի
մի կարեւոր դրդիչի նոյնիսկ հետեանքը:

Ե. Ունայնութեան վոսի նզնաւորը.—Այս անձնա-
ւորութիւնը նշանաւոր լրացումն է անում վանահօր և
արեղայի հակոսնեայ ընթացքի մեջ:

Որոնման արգիւնքը միշտ ունայնութիւնն է՝ միկ-
նոյն է ուղեղով որոնես թէ սրտով.

Շղնաւոր.—Փորեր եմ, փորեր, նայէ, այս եղունկ-
ներովս, ուղեղովս ու սրտովս, փորեր եմ անընդհատ
ճնած օրէս մինչէ վերջին վայրկեանք.., Դատարկ, զա-
տարկ... Մարդը իմաստուն... Ունայնութիւն: (էջ 45—6):

Այս ճգնաւորի անցեալը պատմում է արեղան
այսպէս—

—Այս, երկի զուն այն ճգնաւորն ես, որ մեզմէ
շատ շատ տարիներ առաջ եկեր էր մենակ այս կղզին
ճգնելու: Բայց չէ որ անիկա մեռած է արգէն վաղճւց,
վաղճւց: Ճիշտ է ճգնաւոր, որ զուն տէր ու թագաւոր
ես եղեր ամբողջ ընդարձակ աշխարհներու, պալատնե-
րու մէջ ես ապրեր, հարիւրաւորներ են ծառայեր քու
ամեն մէկ քայլքիդ. Վայելքներուդ ու զւարձութիւն-
ներուդ սահման չէ եղեր: Ճիշտ է, ճգնաւոր, ինչ որ
կը պատմեն: Կըսին՝ թողնը ես այդ բոլորը, պալատն
ու խրախման, իշխանութիւնն ու փառք. Թողեր ես ա-
մեն ինչ, հագեր ես սքիմ, գացեր ես մարդոց մէջ ա-
պաշխարանք քարողելու, քարողելու գութ, քարողելու-
ողորմածութիւն, քարողելու խոնարհութիւն: Ճիշտ է
ճգնաւոր, ինչ որ կը պատմեն: Ճիշտ է որ ատկէ ալ ես
կշտացեր, եկեր ես այս մենութեան մէջ անդորրութիւն
դանիլու, մտածելու հոգիիդ փրկութիւնը (էջ 43—4):

Այս ճգնաւորի պատմութիւնը Սևանի վանքի Պատ-
մութիւնից է առնեած. Սևանի վանքում ճգնել է Քուրդ
անունով մի իշխան, որը Զաքարեա Սպասարից Ա-
րագածոտն գաւառի վրա Իշխանաց Իշխանութիւն ստա-
ցած Վաչէի սերնդից էր. 1250 թւին Քուրդը յայտնի
էր իր հարստութեամբ և մանաւանդ շինարարութեամբ
թէ ժողովրդի և թէ վանքերի համար, բայց վերջում
չը քաւականացաւ ոչ աշխարհային վայելքներով և ոչ
կատարած բարեգործութեամբ. Թողեց աշխահքինը աշ-
խարհքում և զնաց Սևանայ վանքում ճգնեց, ուրև թող-
ւեց: Առաքելոց եկեղեցու արհմտեան մուտքի ընկու-

գինի գոան վրա մնացել է այդ Քրդի անունը, որին և յիշում են Շահմաթունիան (Բ. 97, 213), Զաքարեա պատմիչ և վերջերս Ալիշան («Սիսական» 84^ա):

Զ. Աքեղայի ծովակով լինելը.—Երբ Սեպոյին և աշխարհային կեանքին հետամուս լինելով, արեղան թողեց կղզին և իր խուցը, տաճարն ու իւր ճրագի ազօտ լոյսը և նետուեց ծովը, այնուհետեւ վանականնորը այսպէս խորհեցին ու վճռեցին—

—Ա՞խ, մեր խեղճ, մեր բարի, մեր մաքուր արեղան:—Հեղ ու բարի, համհստ ու սուրբ:—Ան սուրբ էր, սուրբ:—Եղերքն իջնենք, եղբարք, գուցէ գտնենք գիազը. գոնէ դիակը:

—Երթանք բերենք լաստը:—Դժւար է. բայց պէտք է, որ բերենք լաստը:—Լաստը...

—Զարմանք բան է. ինքը սովատեց ուրիշի մը կեանքը ծովէն ու իր կեանքը տուաւ ծովուն:

—Երթանք, երթանք, որոնենք:—Լսեցէք, եղբարք: Եթէ Աստւած ողորմի ու դիազը գտնենք, պէտք է տանենք թաղենք նոր եկեղեցիի սեմին: Զո՞րի նոխազը կը մորթեն տաճարի բեմին:

—Տէրը կը խօսի բու բերնովդ: Թաղենք եկեղեցիի սեմին:

—Գացէք... թաղեցէք... ձեր եկեղեցիի սեմին, հին աստւածներու սեմին. ա, կարո՞ղ են, հզօք այդ հին աստւածները. դեռ շատ են հզօր... (Էջ 123—4):

Սևանի միաբանները միշտ աշխատել են կղզուց դուրս գալ և դրսի աշխարհի հետ սերտ յարաբերութիւն պահպանել, բայց այդ միշտ նրանց չի յաջողւել, որովհետեւ բացի վանական կանոններից, բնութիւնն էլ զինւել է նրանց դէմ: Ճիշտ է՝ պինդ ձմեռ ժամանակ մարդիկ սառցի վրա զնում են այնտեղ, բայց երեք ամիս շարունակ ոչ սառոյցն է անհետանում և լաստով գնալու յարմարութիւն սաեղծուում և ոչ էլ սառոյցն այնքան ամուր է, որ նրա վրայից ոտով գնալինի: Եւ արեղաներից ով ցանկացել է բնութիւն դէմ մաքառել գոնւել է իր աշխարհաձգտման և անհամբեր ողուն:

Այսպիսի Փիղիքական աշխարհագրական հանգամանքը ինարկէ զուգորդել Սեղայամոլ արեղայի պատմութեան հետ գժւար կը լինէր, եթէ դրաման սիմվոլի ծայրայեղ պատկերը չունենար և խորհրդաւոր, ներքին առումնիր:

Բայց քանի որ բացի այդ այդպէս լինելուց, նաև արեղայի գիրեզմանի ու եկեղեցու յարաբերութիւնը ուղղակի Մարիամ տիկնոջ և մի վանականի պատմութեան կրկնութիւնն է, ուստի յիշնք բոլորը կարգով: Այգպիսի դէպքերի առաջին յիշատակութիւնն արել է Ասսաքել պատմիչը—

«Թուին Ծծմթ յապլիկի ամսոյ Ա. աղուհացից հինգերորդ կիւրակէին գործեցաւ այս. կարի ցըտագին ծանըը ձմեռն եղեւ և պաղեցաւ ծովի Գեղամայ և Սևան կղզին. սորին բնակիչքն՝ որբան ամուր էր պաղն՝ գերեսօք պաղին երթային և գային, և յորժամ թուլացաւ պաղն, որ ոչ բառնայր մարդ, յայնժամ կամեցան ջարդել զսառն, առաջնորդ վանից կղզւոյն Բարսկղ անուամբ վարդապետ էաւ ընդ իւր մէկ արեղայ և մէկ սարկաւագ, և երեք աշխարհական, մտին ի տուփի և սկսան կոտորել զպաղն և հասին կոտորելով ի կէս ծովուն»:

Սակայն բնութիւնը միայն պաղով չէ այնտեղ վանականներին աշխարհից կտրում. արեելեան անզուսպ քամին օգնութեան է հասնում խորտակուղ պաղին և իդերկէ հանում աշխարհասէր կրօնաւորների ջանքերը—

«Սկսաւ շնչել հողմն ուժգին, և կամեցան յետս դառնալ ի կղզին՝ (այլ) ոչ եթող հողմն, որ ալեօք ջուրցըն գկոտորեալ սառն բերեալ բառնայր ի վերայ տփոցն, որով ծանրացեսլ տուփին անցին ի ներբոյ ստորին, և սուզան ի ծովի վարդապետն և արեղայն և մէկ աշխարհական (էջմիածին, Էջ 647—7):

Երկու նման դէպք պատահեց նաև 19-րդ դարում.

«Գայ ի Կիմ անապատէ այսր Գրիգոր վարդապետ ոմն այր ձգնասէր, և յաւուր միում առեալ ընդ իւր զմի սարկաւագ և զերկուս կրօնաւոր մահտեսին՝ գնայ լաստիւն յաղագս հարկաւոր ինչ գործոց արտաքոյ ծովակին և զի նորոգ սառել սկսանէր ջուր ծովակին՝ կոտորելով զսառն ընթանային դժուարութեամբ.

ապա ծանրացեալ լաստին ի սառուցից անտի, ընկղմի յիշեալ վարդապետն և մին ի մահտեսեաց (Շահիսաթ. Բ. 226):

Երկրորդ գէպքը բացի ընդհանուր գաղափարով զրամայի սիմվոլ ձեխն յարմարւելուց՝ ուրիշ ցուցումն ունի արեղայի թաղման տեղի նկատմամբ, արեղան թաղւելու արժանի էր իշխանուհու եկեղեցու սեմի տակ այնպէս, ինչպէս Մակարին թաղեցին Մարիամի տւանդատան գուան մօտ:

Մակար վարդապետը Շամշադինեցի պատահական գուան մահուամբ ել յաշխարհէ, ի սոյն 1825 տմբի ի 1 մարտի, որ էր կիւրակէն Տնտեսի, պատարագեալ էր զի՞րիստոս և ի 2 յաւուր երկու շաբաթի մինչ կամեցեալ նորա գնուլ յայցելութիւն Պօղոս վարդապետին, արտաքս բան զկզեակս եղելոյ և այն իվերայ ստոին թուլացելոյ, և մերձ էր ի ցամաք կոյս, բեկեալ ստոին հեղձոյց զնա, զորոյ զմարմինն ողոնեցին այսր անդը թէպէտ կրօնաւորքն կարի հետազոտութեամբ զաւուրս բազում, բայց ոչ գտին»:

Անցաւ ութ ամիս, երկու անգամ ջրահեղձը «ի տեսլեան քնոյ» երեաց մի վարդապետի և ասաց, «Է՞ր զիս ոչ բերեալ թաղէք, զի ես եկեալ եմ առ եկեղեցին». կրօնաւորք կարծելով զմին յեկեղեցեաց կզույս, մանաւանդ զսուրը Աստուածածին, որ մերձ է առ ծովերն, որոնեցին ստիպաւ զժամս բազումս յեզր ծովակին յայսկոյս և յայնկոյս, սակայն ոչ գտին»:

Վերջապէս մի տաճիկ յայտնեց, որ դիակը Պորտակ զիւզի եկեղեցու մօտերքումն է.

«Զայս լուեալ կրօնաւորացն, ետուն պարգևս տաճիկն և առաքեցին ընդ նմա զոմն յինքեանց բերել զմարմինն նորա, զոր բերեալ թաղեցին մերձ ի զերեզման Ռափայէլ վարդապետին մեծաւ յուղարկաւորութեամբ և ցօղով արտասուաց ի 23 նոյեմբերի 1825» (Շահիսաթ. Բ. 234—5):

Իսկ գիտեալ, որ Ռափայէլ վարդապետը (ին. 234) «թաղեցաւ փառաւորապէս ի կողմն հիւսիսոյ եկեղեցոյ սուրբ Աստուածածնի»:

Հիւսիսային կողմից եկեղեցին դուռ չունի, բայց ե-

կեղեցուն կպած մի աւանդատուն կայ, որ Մարիամի անւան հետ է կոտըած.

«Դուռն հիւսիսային աւանդատան է արտաքուստ և ի ներքս եկեղեցւոյն ընդ ուասն ունի լուսամտաձեւ պատունան մի՝ զորմէ ունին աւանդութեամբ կրօնաւորքն թէ գիտութեամբ ետ առնել Տիկինն Մարիամի ժամանակի անդ շինութեանն սակս ինքեւն առանձին աղօթելոյ անդէն ի պահու ժամերգութեան» (ին. 212):

Ահա այդտեղ բնութենարգել և աշխարհասէր Մակարի գիւակի թաղումը՝ Մարիամ տիկնոջ յիշատակին կից՝ զրամային նիւթ է տւել:

